

ного в актуальной и интересной работе молодого историка. Хорошо известно, что на армянском языке нет библиографического перечня источников по истории армянской коммунистической молодежи. До сего времени нет также ни научного исторического труда, ни документального сводного обзора, ни подробных исследовательских очерков, посвященных обстоятельной характеристике героической борьбы нашей молодежи за социалистическую индустриализацию. Г. Аветисяном проделана большая работа по отбору и систематизации наиважнейших данных. Научное значение его работы бесспорно. Необходимо учесть, что, кроме громадного количества тщательно изученных и использованных опубликованных в печати очерков и экскурсов, сборников и материалов, автором учтены также решения партконференций, совещаний и съездов, периодические издания и малоизвестные или совсем неизвестные архивные документы, имеющие прямое или косвенное отношение к проблемам, затронутым в его ценном труде.

В заключение следует указать, что труд этот издан неплохо, хотя и тираж книги, конечно, чрезмерно низок (всего 1000 экз.). Русское издание труда необходимо. Мы не сомневаемся, что русское издание привлечет внимание молодых читателей не только нашей великой социалистической Родины, но и братских демократических республик.

А. Б. КАРИНЯН

Ս. Գ. ԱՐԲԱՆՅԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՉԹԵՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1959 թ.

Չթեվող խոսքի մասերը ժամանակակից հայերենում համեմատաբար սակավ ուսումնասիրված լեզվական կատեգորիաներ են, որոնց գիտական հետազոտման շնորհակալ դործին է ձևոնարկել դոցենտ Ս. Գ. Արբանյանը և հաջողությամբ ավարտել այն:

Յուրաքանչյուր գիտական աշխատություն, յուրաքանչյուր ուսումնասիրություն արժեքավորվում է ամենից առաջ նրանով, թե որքանով է այդ աշխատության հեղինակը ընդգրկել թեմային վերաբերող հարցերը, ինչպիսի լուծում է տվել նրանց և որքանով է նորամուտ աշխատությամբ դարձ տալիս հայրենական գիտության զարգացման գործին:

Այդ իսկ տեսանկյունից քննելով դոցենտ Ս. Գ. Արբանյանի տվյալ աշխատությունը, կարելի է վստահորեն ասել, որ հեղինակը կարողացել է հաջողությամբ ընդգրկել ու լուծել թեմայի բոլոր հարցերը, որոնք դրբում ստացել են իրենց համակողմանի նկարագրությունն ու հիմնավորումը:

Ս. Գ. Արբանյանը գիտական բարենպգծությամբ ուսումնասիրել է տվյալ թեմային վերաբերող դրականությունը և տվել լրիվ գիտական ուսումնասիրություն՝ չթեվող խոսքի մասերի մասին, որոնք, ինչպես նկատեցինք վերևում, ներկայացնում են ժամանակակից հայերենի համեմատաբար չուսումնասիրված բնագավառներից մեկը:

Այս աշխատության ամենապիտանի արժանիքներից մեկն այն է, որ նրանում տրվում է ժամանակակից հայերենի շթեքվող խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրությունը, նրանց աստիճանական զարգացումը՝ սլառմականության ասպեկտով, այսինքն՝ լեզվի զարգացման նախորդ փուլերի որակական հատկանիշների ներթափանցման ու փոխանցման տեսանկյունով:

Ուսումնասիրությունը կատարված է լեզվական փաստերի հետազոտման միակ ճիշտ ու խոր գիտական՝ սլառմական մեթոդով:

Դոցենտ Ս. Խ. Արրահամյանը տալիս է շթեքվող խոսքի մասերի և՛ նմանությունները, և՛ տարբերությունները, ընդ որում երկուսի վրա էլ կանգ է առնում սխտական լրջությամբ և խորանկատությամբ:

Այս աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն էլ այն է, որ նա դուրս է գալիս սովորական մենագրության անձուկ սահմաններից, կազմելով ժամանակակից հայերենի գիտական քերականության համապատասխան բաժիններից մեկը: Պետք է ասել, որ որպես այդպիսին, աշխատությունը բազմաթիվ արժանիքներ ունի, չնայած որ զերծ չէ մասնակի թերություններից, որոնց մասին կխոսենք դրախոսության վերջում:

Աշխատությունը բաղկացած է «Ներածությունից» և հինգ գլխից՝ Մակրայ, Կալ, Շաղկալ, Կղանակավորող Դառեր և Ջայնարկություն:

Աշխատության ներածության մեջ քննարկված տեսական հարցերը լեզվաբանական զգալի արժեք են ներկայացնում:

Բոլոր շթեքվող խոսքի մասերը աշխատության հեղինակը քննում է համակողմանիորեն, առանձին դուլսներում, տալով դրանց իմաստային և երբեմն նույնիսկ ոճական նրբերանգները: Ս. Գ. Արրահամյանը հանգամանալից կերպով ուսումնասիրում է առանձին շթեքվող խոսքի մասերի հատկանիշները, մյուս կողմից խոսքի մասերի հետ նրանց ունեցած աղերսակցություններն ու սպեցիֆիկ-տարբերիչ գծերը, արտահայտած տարբեր իմաստները, տեսակային տարբերությունները և կազմությունն ու կազմավորումը:

Աշխատության գրույթները որպես կանոն հիմնավորված են հայ դասական և ժամանակակից գրողների երկերից բերված բազմաթիվ վկայություններով: Որպես աշխատության ընդհանուր արժանիք, անհրաժեշտ է նշել նրա պարզ ու անսպաճույճ, գիտականորեն մատչելի լեզուն, որի միջոցով հեղինակը կարողանում է լրիվ և հստակորեն ընթերցողի քննությանը ներկայացնել իր գիտա-քերականական գրույթները:

Պետք է ասել, որ հեղինակը նպատակահարմար ձևով օգտագործել է այն չլրականը, ինչ որ գոյություն ունի հայ քերականագիտության մեջ՝ շթեքվող խոսքի մասերի վերաբերյալ, բնականաբար նշելով աղբյուրները (օրինակ՝ Մ. Աբեղյան, Ա. Ղարիբյան, Գ. Սևակ, Ա. Արրահամյան և այլն):

Աշխատության ամենակարևոր արժեքներից մեկն էլ այն է, որ հեղինակը միշտ, անհրաժեշտության դեպքում դուրս է գալիս գոյություն ունեցող լեզվաբանական տրադիցիայի շրջանակներից և համարձակորեն առաջ է քաշում մի շարք նոր տեսական ու գործնական նշանակություն ունեցող հարցեր, կատարում էական վերանայումներ: Այսպես, հեղինակը համոզիչ կերպով վերանայում է հայ լեզվաբանության մեջ մինչև այժմ գոյություն ունեցող այն տեսակետը, ըստ որի յուրաքանչյուր բառ կարող է սլառական միայն մեկ խոսքի մասի Ս. Գ. Արրահամյանը մեղանում առաջին անգամ առաջ է քաշում բառերի խոսքի մասային երկփեղկվածության դադափարը, որը նրան հնարավորություն

է ընձեռում գիտական ճշգրտությունը լուծելու խոսքի մասերի որոշման հարցը: Աշխատության հեղինակը միանգամայն ճիշտ կերպով գտնում է, որ խոսքի մասերը որոշելիս՝ ոչ միայն պետք է հաշվի առնել բառերի ընդհանուր իմաստը (ինչպես ընդունված է եղել մինչև այժմ), այլև շատ դեպքերում պետք է հիմնվել բառերի շարահյուսական բնորոշ կիրառությունների վրա: «Այս հարցում հետևողական լինելու համար, — գրում է հեղինակը, — անհրաժեշտ է նույնիսկ նման հիմք ընդունել բառերի ոչ թե ամեն մի շարահյուսական կիրառություն, այլ խոսքի մասային երկփեղկված իմաստը հաստատող կիրառությունները» (էջ 13):

Ս. Գ. Աբրահամյանն իր այս հետաքրքրական և ինքնատիպ դրույթն ամբողջությամբ է բազմաթիվ համոզիչ փաստերով:

Աշխատության արժեքն առավել ևս բարձրանում է նրանով, որ այն իր մեջ համադրում է գործնական և տեսական հետաքրքրություններ կապացնող բազմազան լեզվական իրողություններ:

Աշխատության 1-ին գլխում հեղինակը քննում է շեքվող խոսքի մասերի մակրայր՝ յուր բոլոր պատմական փոփոխություններով, նրա խոսքի մասային հատկանիշները, կառուցվածքը (պարզ կամ արմատական, բարդ, ամբողջական, բերականական ձևերից կազմված և նկարագրական մակրայրներ):

Մակրայրների կազմավորումը քննելիս՝ հեղինակը բազմաթիվ փաստերի վերլուծումով ցույց է տալիս, թե ինչպես թեքվող խոսքի մասերից շատ ու շատ բառեր, լեզվի պատմական զարգացման ընթացքում ձևաբերելով պարագայական կիրառություններ, ի վերջո վեր են ածվել մակրայրի Այդ պրոցեսը, ինչպես համոզիչ կերպով ցույց է տալիս հեղինակը, շարունակական պրոցես է լեզվի զարգացման ողջ ընթացքում:

Նույն գլխում հանգամանորեն քննված են մակրայրների տեսակները (ժամանակի, տեղի, ձևի, չափի ու քանակի և ընդհանրական) և նրանց ձևա-իմաստային առանձնահատկությունները:

Աշխատության մյուս, առավել արժեքավոր գլխում համակողմանիորեն քննության է ենթարկվում կապը, տրվում են նրա խոսքի մասային հատկանիշները, կապերի կազմավորման պատմությունը, կառուցվածքը, կապերի տեսակներն ըստ իմաստի (տարածական, վերաբերության, բացառման կամ դիմանան, ժամանակի, հիմունքի, պատճառի, բացահայտման, նպատակի, ձևի, չափի, ընդդիմության, միասնության հարաբերություններ ցույց տվող կապեր), կապվող բառի հոլովական կիրառությունները:

Կապերը քննվում են նաև ըստ շարադասական դիրքի (նախադասություններ, կետադրություններ և երկակի շարադասական դիրք ունեցող կապեր): Այս դուրսը ևս, նախորդ գլխի նման, աչքի է ընկնում իր ծավալուն և հարուստ շարադրանքով ու համոզիչ փաստարկումների բազմազանությամբ: Այստեղ հեղինակը գիտականորեն լուծում է սկզբունքային մի կարևոր հարց՝ կապերի դասակարգման հարցը (ըստ կազմավորման աստիճանների) ժամանակակից հայերենում, այդ կապակցությամբ քննադատելով կապերի հարցում արտահայտված այն սխալ դիրքորոշումը, որը փաստորեն անտեսում է կապերի կազմավորման ուսումնասիրման փոփոխությունները: «Մենք բոլորովին հիմք չենք տեսնում այնպիսի մոտեցման մեջ, — գրում է հեղինակը, — երբ մեկ խոսքի մասից աստիճանաբար մյուսին անցնող բառն առաջին խոսքի մասի շարքն է դասվում այնքան ժամանակ, քանի դեռ նա իր կապերն իսպառ չի խզել նրանից: Չէ՞ որ բառը որ չափով որ հեռանում է մի խոսքի մասից, այն չափով փաստորեն մոտենում է մի այլ խոսքի

մասի շարքը: Ըստ որում դրանք իրար հաջորդող երևույթներ չեն, այլ, ըստ էության, միևնույն երևույթի տարբեր կողմերը: Ընդունել, որ տվյալ բառը այս կամ այն չափով արդեն հեռացել է որևէ խոսքի մասից, ինքնին նշանակում է հաստատել, որ այդ նույն բառը հենց նույն չափով արդեն գտնվում է մի այլ խոսքի մասի մեջ» (էջ 78—79): Հենց այդ միանգամայն ընդունելի պատմական մոտեցմամբ և տեսական սկզբունքով առաջնորդվելով էլ հեղինակը կատարում է կապերի վերախմբավորումը:

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է շաղկապին: Այստեղ մանրամասնորեն քննվում են նրա խոսքի մասային հատկանիշները, կազմովյունը (պարզ, քերականական ձևից կազմված, բարդ, բաղադրյալ կամ հարադրական կազմովյալ, կրկնավոր կամ զուգադիր շաղկապներ), շաղկապի երկու հիմնական տեսակները՝ համադասական և ստորադասական: Համադասական շաղկապները հեղինակը բաժանում է հետևյալ ենթատեսակների՝ միավորիչ (բուն միավորիչ և հավելում արտահայտող), ներհակական (ժխտական, հակասական, հակադրական, հակադրական-սլայմանական), բաժանական կամ տրոհական, մակաբերական: Ստորադասականի ենթատեսակներն են՝ մեկնական, ժամանակի, պայմանի, պատճառի ու հիմունքի, նպատակի, զիջական, համեմատովյան:

Ժամանակակից հայերենի դիտական քերականության համար արժեքավոր է գրախոսվող աշխատության «եղանակավորող բառեր» գլուխը: Այս գլխում հեղինակը, լրացնելով ժամանակակից հայերենի բուհական դասընթացում զգացվող բացը, եղանակավորող բառերը դիտում է որպես առանձին խոսքի մաս և առաջին անգամ ժամանակակից հայերենի քերականության մեջ դիտական հիմնավորվածությամբ տալիս է այդ խոսքի մասի բնորոշ հատկանիշների, տեսակների, կազմության ու կազմավորման ամբողջական շարադրանքը: Ս. Գ. Աբրահամյանը եղանակավորող բառերը ըստ կազմության բաժանում է հետևյալ տեսակների՝ պարզ, անանջավոր, քերականական ձևերից կազմված, բարդ ու նկարագրական:

Այսուհետև հեղինակը եղանակավորող բառերը խմբավորում է ըստ իմաստի՝ հաստատական, ցուցական, ժխտական, զիջական, սաստկական, կամային, սահմանափակման և երկրայական: Տրվում են նաև վերջինիս ենթատեսակները՝ երկբայական-հայտնական, երկբայական-անհավանական, երկբայական-հարցական:

Աշխատության վերջին գլուխը «Ձայնարկությունն» է, որտեղ տրված են նրա խոսքի մասային հատկանիշները, շարադասությունը, նրա տեսակները, որոնք արտահայտում են զգացական, կամ կամային վերաբերմունք: Այստեղ խոսվում է նաև այն ձայնարկությունների մասին, որոնք ստեղծվել են նմանաձայնության հիմքի վրա:

Աշխատության վերջում տրված է համառոտագրությունների բանալի և օգտագործված դրականության ցանկ:

Գրախոսվող աշխատության մեջ կա մի երկու մանր թերություն, որոնք հեշտությամբ կարող են ուղղվել նրա հետագա հրատարակման ժամանակ:

Աշխատության 15-րդ էջում հեղինակը խոսքի մասի ճիշտ արտահայտությունների փոխարեն երկու անգամ գործածել է խոսքի մաս արտահայտությունը, որն ընդունելի չէ: «Այսպիսով, մակբայի, կապի, շաղկապի, եղանակավորող բառերի, ձայնարկության, փոխանունաբար գործածության դեպքում հղումվելու

հնարավորությունը չի խանգարում այն բանին, որ այդ խոսքի մասերը համարվեն շրեմիով խոսքի մասեր: Չրեմիով խոսքերի մասերը, որպես այդպիսիք, հակադրվում են մյուս խոսքի մասերին» (ընդգծումները մերն են, — Հ. Հ., էջ 15):

Ձայնարկությունների իմաստային առանձնահատկությունը բնութագրելիս՝ հեղինակը գործածում է և՛ զգացմունք, և՛ զգացում բառերը: Քանի որ ձայնարկությունների մի մասն արտահայտում է զգացմունք, իսկ մյուս մասը՝ զգացում, լավ կլիներ, որ հեղինակը զգացմունք արտահայտող ձայնարկություններն առանձնացներ զգացում արտահայտողներից:

Հանգամանորեն բացատրելով եղանակավորող բառերի իմաստներն ու կիրառությունները, հեղինակը, լավ կաներ, եթե աշխատության մեջ բերեր նաև հետևյալ եղանակավորող բառերը՝ հիբալի, չգիտես, ի միջի ալլոց, հավանորեն, դժբախտաբար, ցավով, չէ՛ որ, ոչ մի կերպ և այլն:

Ինչպես տեսնում ենք, նշված աննշան թերությունները բնավ չեն խցեցնում աշխատության արժանիքները:

Ս. Գ. Արրահամյանի «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» մենագրությունը հայ լեզվագիտության ուշագրավ աշխատություններից է:

Հ. Ե. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ